# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Կիր. 17 Սեպտ.— Բարեկենդան Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արղ. Բարախանեան:

Դշ. 20 Սեպտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Եշ. 21 Սեպտ.— Ծնունդ Ս. Աստուածածնի: Առաւօտուն Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը, եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Տաճարէն ներս, հանդիսապետութեամբ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, որ նաեւ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Տիրամօր Գերեզմանին վրայ:

Շբ. 23 Սեպտ.— Տօն Եկեղեցւոյ Նաւակատիս Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արղ. Մինասեան:

– Խաչվերացի մեծահանդէս նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը: Ապա Կենաց Փայտի մասունքը թափօրով փոխադրեց Աւագ Սեղան:

– Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերուն:

Կիր. 24 Սեպտ.— Տօն Վերացման Ս. Խաչին (629): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ քարոզեց Պատրիարք Սրբազան Հայրը: Սպասարկողներն էին Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան եւ Տ. Ղեւոնդ Արղ. Յովհաննիսեան: Իսկ բուրվառակիրներն էին Տ. Իսահակ Արղ. Մինասեան եւ Տ. Նորայր Արղ. Գազազեան: «Հայր Մեր»էն առաջ կատարուեցաւ Գոհաբանական Մաղթանք Թ. տարեդարձի առիթով Անկախ Հայաստանի Հանրապետութեան: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Ս. Պատարագէն ետք Լուսարարապետ Սրբազանը հանդիսապետեց Մեյգոնեան բարերար եղբայրներու հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան պաշտամունքին:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ կատարուած Խաչվերացի մեծահանդէս «Անդաստան»ին:

Բշ. 25 Սեպտեմբեր.— Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արղ. Յովհաննիսեան: Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան հանդիսապետեց հոգեհանգստեան կարգին:

Շբ. 30 Սեպտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 1 Հոկտ.— Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Ուր. 6 Հոկտ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շբ. 7 Հոկտ.— Ս. Գէորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան: Երբ ու դարձի թափօրները գլխաւորեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Արարողութեանց աւարտին Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղպտոց վանքի տեսչէն:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիր. 8 Հոկտ.— Տօն Վարագայ Ս. Խաչին (660): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. մանուկեան: Լուսարարապետ Սրբազանը օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց եւ քարոզեց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Շբ. 14 Հոկտ.— 72 Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արղ. Գազազեան:

Կիր. 15 Հոկտ.— Նկատի ունենալով երկրի անապահով վիճակը չկատարուեցաւ Ռամլէի Ս. Գէորգայ Վանքի տարեկան Ս. Պատարագը:

digitised by A.R.A.R.@

Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճանեան:

Ուր. 20 Հոկտ.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 21 Հոկտ.— Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Տօն Ազգային եւ Եկեղեցական: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Ս. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան: Ս. Պատարագի վերջաւորութեան կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մեծանուն քարերարներ Գալուստի, Նուարդի, Սարգիսի եւ Տիրուհիի եւ համայն Կիւլպէնկեան գերդաստանի ննջեցեալներու հոգիին ի հանգիստ, նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 22 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շր. 28 Հոկտ.— Ս. Չորից Աւետարանչացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին վրայ բացուող Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 29 Հոկտ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ սեղանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Բշ. 30 Հոկտ.— Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ըստ սովորութեան, Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին Տեսուչը՝ Տ. Հայրիկ Վրդ. Գալայճեան պատարագեց նոյն տաճարին մէջ գտնուող Հայր Յովսէփի գերեզմանի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 4 Նոյ.— Սրբոց Երկոտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արղ. Աթաջանեան:

– Կէսօրէ ետք, Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի եւ Խաչգիւտի այրի ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր, թափօրապետութեամբ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի:

Կիր. 5 Նոյ.— Գիւտ Ս. Խաչի (326): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Այստեղ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արղ. Մինասեան:

Ս. Պատարագէն ետք կազմուեցաւ մեծահանդէս թափօր, իջնելով նախ Գիւտ Խաչի այրը եւ բարձրանալով Ս. Գերեզմանի շրջափակը, երիցս դառնալով անոր շուրջը եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը կը գլխաւորէր Պատրիարք Սրբազան Հայրը, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի Քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ՝ետք, թափօրով արարողութիւնները վերջացան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Շր. 11 Նոյ.— Սրբոյն Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արղ. Յովհաննիսեան:

Կիր. 12 Նոյ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արղ. Բաբախանեան:

Ուր. 17 Նոյ.— Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Շր. 18 Նոյ.— Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան: Ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռոյ բարերարուհի Աղաւնի Ճէվահիրճեանի եւ պարագայից հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Կիր. 19 Նոյ.— Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան: Ս. Պատարագէն ետք Ս. Աթոռոյս երկարամեայ Միաբան Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեանի մահուան Ա. տարելիցին առթիւ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, նաեւ Երուսաղամացի Հայոց Բարեսիրական Միութեան անդամներուն հոգիներուն համար: Հանդիսապետն էր Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

digitised by A.R.A.R.@

Շբ. 25 Նոյ.– Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալճաճեան:

Կիր. 26 Նոյ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան: Ժամարարն էր Տ. Աւետիս Արղ. Իփրաճեան:

Շբ. 2 Դեկտ.– Տօն Ամենայն Սրբոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արղ. Զաքարեան:

Կիր. 3 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Արղ. Գազազեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Կիւրեղ Եպս. Գաբիկեան:

Բշ. 4 Դեկտ.– Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր իմքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառով» մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Լուսարարապետ Սրբազանը նախագահեց բարեբար Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի ննջեցելոց տարեկան հոգեհանգիստին:

Շբ. 9 Դեկտ.– Գրիգորի Սքանչելագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 10 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վիգէն Եպս. Այքազեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Արղ. Պուրնէքեան: Վիգէն Սրբազան Երուսաղէմ կը գտնուէր ընկերակցելով Միացեալ Նահանգաց Եկեղեցիներու Խորհուրդին Քրիստոնեայ համայնքներու 40 ներկայացուցիչներուն, որոնք առանձին տեսակցութիւն ունեցան Պատրիարք Սրբազան Հօր հետ, ինչպէս նաեւ Յունաց եւ Լատինաց Պատրիարքներուն, եւ հաւաքարար միւս Քրիստոնեայ պետերուն հետ: Անոնք տեսակցութիւններ ունեցան Պաղեստինեան եւ Իսրայէլեան պետական առաջնորդներուն հետ, այցելեցին այն քաղաքները ուր կործանարար հրձիգութիւններ եւ սպանութիւններ տեղի ունեցած են: Եւ իրենց տպաւորութիւնները հրապարակեցին:

Ուր. 15 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

Շբ. 16 Դեկտ.– Առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիր. 17 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ Խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Էմմանուէլ Արղ. Աթաջանեան:

Ուր. 22 Դեկտ.– Յունաց Ամեն. Տ. Տիոտորոս Ա. Սրբազան Պատրիարքի թաղման պատճառաւ, Յղութիւն Ս. Աստուածածնի տօնին նախատօնակը եւ օրուան Ս. Պատարագի մատուցումը Ս. Աստուածածնի Տաճարին մէջ յետաձգուեցաւ Երկուշաբթի օրուան:

Շբ. 23 Դեկտ.– Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Մակարայ Մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արղ. Յովհաննիսեան:

Կիր. 24 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Տ. Նուրհան Եպս. Մանուկեան:

– Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Բշ. 25 Դեկտ.– Յղութիւն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբան Հայրեր իմքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Գուսան Վրդ. Ալճաճեան:

Ուր. 29 Դեկտ.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շբ. 30 Դեկտ.– Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արղ. Մինասեան:

Կիր. 31 Դեկտ.– Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզիչն էր Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

digitised by A.R.A.R.@

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ուր. 1 Սեպտ. – Դպրոցական շրջանի տարեմուտին Թարգմանչաց դռները հիւրընկալեցին 120 աշակերտ-աշակերտուհիներ: Տարեմուտի արարողութիւնը կատարուեցաւ ժամը 8:30-ին ներկայութեամբ Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան անդամներու: Վարժարանի Տեսուչ Տ. Թէոդորոս Արք. Զաքարեանի Բարեգալուստի խօսքերէն յետոյ Պատրիարք Սրբազան Հայրը անդրադարձաւ կրթական գործին կարեւորութեան սփիւռքի մէջ մանաւանդ: Ապա, Պատրիարք Սրբազան Հայրը, հոգեւորական հայրերուն հետ հանդիպում ունեցաւ աշակերտներուն եւ ուսուցիչներուն հետ իւրաքանչիւր դասարանի մէջ:

Նոյն օրը ժամը 10-ին կատարուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի վերաբացումը: Կրթական տարեմուտի արարողութեան ներկայ էին Միաբանական Ուխտը եւ ուսուցչական նոր համալրուած կազմը, գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր: Այս առիթով, Ժառանգաւորաց Վարժարանի տեսչութիւնը ստանձնած Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան ուրախութեամբ յայտարարեց Հայաստանէն նոր ժամանող քսան ժառանգաւորսաներու գալստեան լուրը: Իր փակման խօսքին մէջ, յետ ընթերցման «Ս. Աւետարանի» պատգամին, Պատրիարք Սրբազան Հայրը ժառանգաւորներուն յիշեցուց ուսումնատենչ հոգեւորականներ լինելու անհրաժեշտութիւնը ի ծառայութիւն Հայց. Առաքելական Եկեղեցւոյ:

Սեպտ. 12-16 – Քահանայական Ձեռնադրութեան Խորհուրդէն եւ Վեղարի Տըւչութենէն վերջ, չորս Նորընծաներու «Քառասունք»-ի առանձնացումը տեղի ունեցաւ Բեթղեհէմի Հայոց Վանքէն ներս: Քառասնօրեայ խորհրդածութեան շրջանը ամբողջացնելէն անմիջապէս ետք, ըստ աւագութեան կարգի, նորընծայ աբեղաները իրենց անդրանիկ պատարագը մատուցին Ս. Յակոբայ Աւագ խորանին վրայ.-

Գշ. 12 Սեպտ. – Տ. Նորայր Արք. Գազազեան

Դշ. 13 Սեպտ. – Տ. Իսահակ Արք. Մինասեան

Եշ. 14 Սեպտ. – Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան

Ուր. 15 Սեպտ. – Տ. Խադ Արք. Ճուղտուրեան

Շբ. 16 Սեպտ. – Տ. Բագրատ Արք. Պուրնէքեան՝ անոնց «Քառասունքի» ուսուցիչը, պատարագեց՝ ապաշխարկութեամբը նորընծաներուն, որպէս կանոն եւ աւանդութիւն Ս. Յակոբէն ներս:

Ուր. 15 Սեպտ.– Ի պատիւ նորընծաներուն, Միաբանական նախաճաշ տրուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի սեղանատան մէջ, ուր Լուսարարապետ Նուրհան Սրբազան այդ բացառիկ առիթով Միաբանութեան անդամներուն յանձնեց Պատրիարքարանի գրախանութին համար պատրաստուած արծաթեայ մասնաւոր սրբատուփէն: Պատրիարք Սրբազան Հայրը իր ուրախութիւնը յայտնեց Զինուորեալ Միաբանութեան թիւին աճումին համար, մաղթելով որ «անինք նաեւ իմացական եւ հոգեւորական հետաքրքրութիւններով եւ նուիրումով, արժանանալու համար "մշակ առանց ամօթոյ" կոչումին եւ իրենուանքին»:

Կիր. 17 Սեպտ. – Երուսաղէմի Ասորի Ուղղափառ Եկեղեցւոյ Արքեպիսկոպոս Սեւերիոս Մուրատի կողմէ ի պատիւ Միացեալ Նահանգաց Արեւմտեան թեմի Ասորի Արքեպիսկոպոս Գլէմիս Գարլանի կազմակերպուած հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Աւետիս Արք. Իփրանեանի:

Եշ. 21 Սեպտ. – Յետ միջօրէի 5:30ին, Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Շիրվանեանի, Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Համբարձում Վրդ. Քէշիշեանի ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի մէջ Էնթայ-Տիֆէմէյշն կազմակերպութեան նոր կեդրոնի բացման եւ հիւրասիրութեան:

– Եւ նոյն երեկոյեան ժամը 7:30ին, Նոթր-Տամին մէջ հիւրասիրութեամբ Երուսաղէմի մէջ Պատւոյ Հիւպատոս Պր. Յոլակ Մոմճեանի, տօնախմբուեցաւ իններորդ տարեդարձը Հայաստանի Անկախացեալ Հանրապետութեան, որուն մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Միաբանութեանս հոգեւորական հայրերուն:

Դշ. 11 Հոկտ.– Երուսաղէմաբնակ Յակոբ Գալայճեանի պատրաստած եկեղեցական սպասներու եւ լանջազարդերու ցուցահանդէսը տեղի ունեցաւ Նոթր-Տամին մէջ երեկոյեան ժամը 7-ին: Հրաւիրեալ հետաքրքրասէրներու ներկայութեան Պատրիարք Սրբազան Հայրը խրախուսանքի խօսքեր ուղղեց շնորհալի արուեստագէտին՝ մասնակիցներու ուշադրութեան յանձնելով անոր ստեղծագործական կարողութիւնը:

Եշ. 19 Հոկտ.– Սան Ֆրանսիսկոյէն, Տիկին Ժագլին Փափազեան Ղազարեան, վարիչ Ուիլլիըմ Սարոյեան փաունտէյշընի, դէպի Հայաստան իր այցելութենէն յետոյ, ըստ ծրագրի, այցելեց Երուսաղէմ, տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք Սրբազանին հետ, եւ շրջեցաւ Պատրիարքարանիս Մայր Տաճարը եւ զանազան հաստատութիւնները, եւ Ս. Յարութեան Տաճարը:

Շբ. 21 Հոկտ.– Ս. Թարգմանչաց տօնին առիթով, Միաբանութիւնն ու Ժառանգաւորաց

սաները միասին ընթրեցին: Ժառանգ. Վարժարանի Տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի կարգադրութեամբ Վարժարանի սաներ Թարգմանչաց յիշատակին հետ կապուած երգեր եւ գրութիւններ ներկայացուցին: Պատրիարք Սրբազան Հայրը ոգեկոչեց Թարգմանիչներու ազգային սրբազան ձկարագիրըփ ակնկալելով տեսնել այդ ոգին իւրաքանչիւր ուսանողի եւ Միաբանութեանս անդամի մէջ:

Կիր. 5 Նոյ.– Պատրիարք Սրբազան Հօր գահակալութեան 10-ամեակի առիթը նշուեցաւ Ժառանգաւորաց Վարժարանի մէջ: Ընթրիքի պահուն սրտի խօսքեր ուղղուեցան Պատրիարք Սրբազան Հօրփ Վանիկ Վրդ. Մանկասարեանի, Գուսան Վրդ. Ալճանեանի, Բագրատ Արք. Պուրճէքեանի, Թէոդորոս Արք. Զաքարեանի, Նորայր Արք. Գազազեանի կողմէ, նաեւ Ժառանգաւորաց Վարժարանի տեսուչը իր մասնակցութիւնը բերաւ սաներու անունէն:

Տօնակատարութեան երկրորդ եւ հետաքրքիր մասն աւելի ընդհանրական բնոյթ ունէր, որտեղ հրաւիրուած էր նաեւ ուսուցչական կազմը:

Ժառանգաւորաց Վարժարանի զարդարուած փոքր սրահին մէջ, տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեանի բացման խօսքով, սաները երեկոյթը նոխացուցին տեսղծագործական հարուստ համարներով, հիմնականօրէն օգտագործելով Սրբազան Հօր գրական ժառանգութիւնը (երգչախումբ, մեներգ, բանաստեղծութիւն) եւ սաներու անձնական շարադրանքը: Անակնկալ էր, այժմ Հայֆա բնակող Նուբար Ասլանեան հայ երաժիշտին յօրինած երգը՝ Պատրիարք Սրբազանին ձօնուած, զոր աշակերտները կատարեցին եռաձայն: Տ. Արիս Եպս. Շիրվանեան ներկայացուց Միաբանութեանս անդամներու կողմէ անակնկալ նուէրը, զարդարելով Սրբազան Հօր կուրծքը ձեռագործ Պանակէով ու Լանջախաչով: Յոբելիարի փակման ուղերձին մէջ կար գոհունակութիւն, խանդավառութիւն եւ շնորհակալութիւն, որոնք կ'արտայայտուին հետեւեալ խօսքին մէջ. «... Ես հրճուանք կ'ապրիմ, եթէ մանաւանդ զիս գործածէք ձեր աստուածային շնորհները ի յայտ բերելու եւ զարգացնելու համար»:

Եշ. 9 Նոյ. – Իսրայէլի նախկին վարչապետ Իսհակ Ռապինի սպանման 5րդ տարելիցին առթիւ, Քնէսէթի նիստին մէջ տեղի ունեցած յայտագրին ներկայ գտնուեցաւ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Քանի մը օր յետոյ մահացաւ Տիկին Լիա Ռապին, որուն Թաղման արարողութեան եւս (ԴՇ. 15 Նոյեմբերին) Հայր Սամուէլ ներկայ գտնուեցաւ Հէրձէլ գերեզմանատան մէջ:

Եշ. 9 Նոյ. – Իսրայէլի նախկին վարչապետ Իսհակ Ռապինի սպանման 5րդ տարելիցին առթիւ, Քնէսէթի նիստին մէջ տեղի ունեցած յայտագրին ներկայ գտնուեցաւ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Քանի մը օր յետոյ մահացաւ Տիկին Լիա Ռապին, որուն Թաղման արարողութեան եւս (ԴՇ. 15 Նոյեմբերին) Հայր Սամուէլ ներկայ գտնուեցաւ Հէրձէլ գերեզմանատան մէջ:

Եշ. 9 Նոյ. – Սիոն լերան վրայ գտնուող գերմանական Տօրմիշըն Վանքի նախկին վանահայր Հայր Նիկողայոս, Գերմանիայէն այցելութեան առիթով տեսակցութիւն ունեցաւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Երկուտասնեակ տարիներու Վանահայր Հայր Նիկողայոս հանգուցեալ Եղիշէ Պատրիարքէն ստացած է առանձնաշնորհում խաչ կրելու եւ մեր պաշտամունքներուն մասնակցելու: Գիւտ Խաչի տօնին առիթով (5 Նոյեմբեր) մասնակցեցաւ Շաբաթ յետ միջօրէի «Հրաշափառով» դէպի Ս. Յարութեան Տաճար մուտքին եւ նախատօնակին: Նաեւ 11 Նոյեմբերին, իրենց մասնաւոր դասընթացքներուն հետեւող 30 հոգինոց խումբը առաջնորդեց Սուրբ Յակոբայ Մայր Տաճար, ներկայ գտնուելու Շաբաթ երեկոյեան Կիրակնամտից ժամերգութեան, շրջելու Հայոց Վանքի հաստատութիւնները, եւ տեսակցութիւն ունենալու Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Եշ. 14 Դեկտ.– Երուսաղէմի Եբրայական Համալսարանի Հայագիտական Ուսմանց Բաժնի հիմնադիր վարիչ Բրոֆ. Մայքլ Սթօն, Համալսարանի նախագահ Մէնախէմ Մակիտորի հրաւէրով, Հինգշաբթի, 14 Դեկտեմբերին, պատուոյ ճաշով գնահատանք եւ շնորհակալութիւն յայտնեց Հայագիտական Ուսմանց համար հաստատուած երկու կրթաթոշակներու բարերարներուն:

Տէր եւ Տիկին Յոլակ եւ Ալեկրա Մոմճեան եւ Զաւակունք իրենց հօրփ Գրիգոր Սերոբ Մոմճեանի յիշատակին կրթաթոշակ մը հաստատեցին Եբրայական Համալսարանի Հայագիտական Ուսմանց բաժանմունքին մէջ, ըստ որում, Երուսաղէմի Սրբոց Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի շրջանաւարտներէն Հայերէն լեզուի քննութեան մէջ յաջողագոյն աշակերտին, չորս տարիներու համալսարանի թոշակը պիտի հոգացուի, իբրեւ ուսանող Հայագիտական Ուսմանց բաժանմունքին:

Երկրորդ կրթաթոշակը հաստատուած է նուիրատուութեամբ Նիւ Եօրքէն Մէյ եւ Սամուէլ Ընտանիքի Հիմնարկին, որ $10,000 (Տասը հազար Ամերիկեան Տոլար) փոխանցած է Ամերիկացի Բարեկամներ Եբրայական Համալսարանի Ընկերութեան, իբրեւ կրթաթոշակ Համալսա-

digitised by A.R.A.R.@

րանի մէջ ուսանող Հայ Հոգեւորականներու։ Դեկտեմբեր 14ի պատւոյ ճաշին, գնահատանքի եւ քաջալերանքի զգացումներ արտայայտեցին Պատրիարք Սրբազան Հայրը (որ հրաւիրուած էր ընկերակցութեամբ Սրբոց Թարգմանչաց Տեսուչ Տ. Թէոդորոս Արք. Զաքարեանի եւ Վարժարանի Տնօրէն Պր. Եղիա Տիգրանեանի), Եբրայական Համալսարանի Նախագահ Տիար Մէնախէմ Մակիտոր, Բրոֆ. Եահիր Զաքօվիչ, եւ Բրոֆ. Մայքլ Սթօն, որ բացի Հայագիտական Ուսմանց Բաժանմունքի 30 տարիներու գոյութեան եւ իրագործումներու մասին տուած ամփոփ տեղեկութեանց, պաստառի վրայ լուսարձակուած նկարներ ցոյց տուաւ, յայտնելով որ Հոկտեմբերին Երեւան այցելած է Համալսարանէն հնագէտ Դաւիթ Ամիտի եւ Հայկական Ուսմանց շրջանաւարտներէն լուսանկարիչ Յովաբ Լօէֆի ընկերակցութեամբ, եւ Սիւնիքի Առաջնորդ Տ. Աբրահամ Եպս. Մկրտչեանի ցուցմունքներով այցելած են պատմական վայրեր եւ Վայոց Ձորի մօտ գերեզմանատուն մը, ուր յայտնուեր են աւելի քան 40 գերեզմանաքարեր, որոնց վրայ Եբրայերէն եւ Արամերէն 16 արձանագրութիւններ կան։ «Արձանագրութիւնները թուագրուած են ուշ տասներեքերորդ եւ վաղ տասնչորսերորդ դարերով։ Այս, աննախադէպ է, եւ պատմագրական յայտնի աղբիւրներու մէջ չկան տեղեկութիւններ միջնադարեան Հայաստանում հրեայ փոքրամասնութեան մասին։ ... Այդ ժամանակաշրջանին, Վայոց Ձորը, եւ ի հարկէ ողջ Սիւնիքը Հայաստանում, մտաւոր կեանքի կարեւոր կեդրոն էր։ Այնտեղ էին գտնւում հռչակաւոր համալսարան եւ վանքեր, ինչպիսիք էին Գլաձոր եւ Տաթեւ։»

Ճաշի վերջաւորութեան, Տիար Ցոլակ Մոմճեան՝ Հայաստանի Պատւոյ Հիւպատոս, իր ընտանիքին անունով, իր գոհունակութիւնը յայտնեց իրեն ընձեռուած այս պատեհութեան համար, որով իր հօրը յիշատակին իր երախտագիտութիւնը յայտնած կ'ըլլար։ Ան Եղեռնէն ազատուած հայ որբ մըն էր, իր ազգին սիրովը տոգորուած , իր ընտանիքին, զաւակներուն դաստիարակութեան նախանձախնդիր, եւ մարդասէր։

Իսկ Ռուտին Հիմնարկի վարիչ Տիար Ճէք Ռուտինի եւ ընտանիքին անունով, Բրոֆ. Մուրինա Ֆրիձ, գոհունակութիւն յայտնեց կրթաթոշակը տրամադրուած ըլլալուն համար, լաւագոյն յաջողութիւններ մաղթելով Հայագիտական Ուսմանց ծրագիրներուն, եւ ցաւ յայտնելով որ Տիար Ճէք Ռուտին կարող չէր անձնապէս ներկայ գտնուելու։

Համալսարանի անունով նախագահ Մէնախէմ Մակիտոր մէկական յուշանուէրներ յանձնեց Տիար Ցոլակ Մոմճեանին եւ Բրոֆ. Մուրինա Ֆրիձին։

Գշ. 19 Դեկտ. – Շաբաթական այցելութեամբ մը Վանքիս հիւրն էր Պոլիսէն ժամանած Արամ Եպս. Աթէշեան։ Պոլիսէն իրեն ընկերակցած էր Օր. Մարգարիտ Տիւլգատիրեան, որ պիտի պատրաստուի մայրապետի ուխտ ընդունելու։ Տնօրէն ժողովի որոշմամբ ան որոշ ժամանակով մը պիտի մնայ Երուսաղէմ վարժուելու աշխարհաբար լեզուին, եկեղեցական ծէսին եւ արարողութեանց։

Եշ. 28 Դեկտ. – Իսրայէլի Նախագահ Մօշէ Քացաւի կողմէ բոլոր կրօնապետներուն ուղղուած Նոր Տարուան հրաւէրին ընդառաջելով, հաւաքոյթին ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Նուրհան Արք. Մանուկեանի եւ Սամուէլ Վրդ. Աղոյեանի։

digitised by A.R.A.R.@